2223
գ

Մ. ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

13504

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Էջմիածնի Տպարան Մայր Աթոռոյ
1920

13504

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հաւան գտեալ հաստատեմք զայս կանոնադրութիւն Միաբանական Ուխտի ս. Աթոռոյս բաղկացեալ յ 104 յօդուածոց եւ տամք ի գործադրութիւն։

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14|27 Դեկտեմբերի 1919 թ.

Ս. Էջմիածին

Թ. 860

223
գ

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

§ 1. Ս. Էջմիածինն է Ամենայն Հայոց Հայրապետի Աթոռը և բոլոր հայ վանքերի ու եկեղեցիների մայրը։

§ 2. Ս. Էջմիածնի վանքն ունի իւր միաբանութիւնը, որի Գլուխն է Ամենայն Հայոց Հայրապետը։

§ 3. Ս. Էջմիածնի միաբանութիւնն է կուսակրօնների հոգևոր ուխտ իւր յատուկ կանոնադրութեամբ։

§ 4. Ս. Էջմիածնի միաբանութեան նպատակն է՝

ա.—Քարոզել Աւետարանը.

բ.—Ծառայել Հոգևոր կրթական գործին.

գ.—Մշակել Հայագիտութիւնն ու հայ գիւղարուեստը.

դ.—Հաստատել և պահել աստուածահաճոյ հիմնարկութիւններ.

ե.—Պատրաստել եկեղեցու համար հոգևոր վարիչներ.

§ 5. Ս. Էջմիածինն իւր նպատակներին ծառայելու համար ունի եկամտի որոշ աղբիւրներ։

§ 6. Միաբանական կեանքի հիմքը Հայաստանեայց ս. եկեղեցու ընտրական և ժողովրդական (կօլեգիալ) սկզբունքն է։

§ 7. Ս. Էջմիածնի միաբանութիւնը մասնակցում է Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան իւր ընտրած ներկայացուցիչներով։

§ 8. Միաբանութիւնը վարում է համայնական կեանք։

Ծանօթ.—Միաբանութեան ներքին կենցաղի համար կայ յատուկ հրահանգ.

§ 9. Ս. Էջմիածնի վանքն է ժառանգը իւրաքանչիւր միաբանի արդար վաստակով ձեռք բերած շարժական և անշարժ ունեցուածքի։

Բ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ։

§ 10. Մ. Աթոռի միաբան են՝ ս. Էջմիածնում ձեռնադրուած բոլոր եպիսկոպոսները, միաբան ընդունուած վարդապետները, սարկաւագները և դպիրները։

§ 11. Միաբանութեան անդամ ընտրուում է նա, որ ունի՝

ա.—Քաղաքացիական հասունութիւն.

բ.—Բարձր կամ միջնակարգ կրթութիւն.

գ.—որ չունի հոգեկան և մարմնական արատ։

§ 12. Վանք մտնել ցանկացողը խնդիր է տալիս Վեհափառ Հայրապետի անունով, ներկայացնելով պատշաճ վկայագրեր, որն և ուղարկուում է միաբանական ժողովին։

§ 13. Միաբան ընդունող և արձակողն է միաբանական ժողովը Վեհափառ Հայրապետի հաստատութեամբ։

§ 14. Միաբանը միաբանակցութիւնից հրաժարուելու դէպքում խնդիր է ներկայացնում Վեհափառ Հայրապետին, որն և յանձնում է միաբանական ժողովին։

Գ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔՆ ՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԸ.

§ 15. Նոր ընդունուող միաբանը ուխտում է Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցւոյ կարգերին հաւատարմութիւն և Ամենայն Հայոց Հայրապետին հնազանդութիւն։

§ 16. Իւրաքանչիւր միաբան պարտաւոր է կատարել իրեն յանձնուած աշխատանքը կամ պաշտօնը։

§ 17. Իւրաքանչիւր միաբան ունի սեփականութեան իրաւունք ընդհանուր հիմունքներով։

§ 18. Իւրաքանչիւր միաբան իրաւունք ունի իւր շարժական և անշարժ ստացուածքը թողնելու կտակով բարեգործական և ազգօգուտ հաստատութիւնների։

Ծանօթ.—Միաբանի մահուան դէպքում կազմուում է յատուկ ցուցակ նորա ամբողջ ունեցածի վանական խորհրդի ձեռքով և ներկայացուում է ի տնօրինութիւն միաբանական ժողովին։

§ 19. Ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալու համար միաբանը պարտաւոր է ներկայացնել գիտական աշխատանք (աստուածաբանական և հայագիտական, մասնակի դէպքում նաև ընդհանուր գիտական)։ Ծայրագունութեան իրաւունք տրուում է նաև վկայեալ քարոզիչ վարդապետին։

§ 20. Միաբանութեան իւրաքանչիւր անդամ վանքում ստանում է հաւասարապէս՝ բնակարան, սնունդ, վառելիք, լուսաւորութիւն, բժշկական խնամք և ուսումնական-կրթական զարգացման անհրաժեշտ միջոցներ։

§ 21. Իւրաքանչիւր միաբան ստանում է, համա-

ձայն իւր աստիճանի և պաշտօնի սահմանուած ռոճիկը։

Դ.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

§ 22. Միաբանութիւնն ունի՝

ա.—Տարեկան ընդհանուր,

բ.—Ներքին միաբանական և

գ.—Արտակարգ ժողովներ։

§ 23. Միաբանական ընդհանուր ժողովը կազմուում է միաբաններից, տարին մի անգամ, սեպտեմբերի 20-ին։

§ 24. Իւրաքանչիւր միաբան ժողովներին մասնակցում է ձայնի իրաւունքով, իսկ միւս վանքերի միաբանները՝ երբ նոքա պաշտօնավարում են Մ. Աթոռում։

§ 25. Միաբանական ընդհ. ժողովի զբաղման առարկաներն են՝

ա.—Ազգային-եկեղեցական ժամանակակից հարցերի քննութիւն.

բ.—Դրսի և ներսի միաբանների գործունէութեան փոխադարձ ծանօթութիւն.

գ.—Վանական հաստատութիւնների և մարմինների տարեկան գործունէութեան քննութիւն.

դ.—Հաստատութիւն հաշիւների և նախահաշիւների.

ե.—Ընտրութիւն վանական հաստատութիւնների և մարմինների պաշտօնէութեան։

§ 26. Միաբանական ընդհանուր ժողովի նախագահն է Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչը։

§ 27. Ընդհանուր ժողովն ընտրում է ատենապետ և երկու ատենադպիր, իսկ տեղական ժողովների համար ա և բ. ատենապետ և երկու ատենադպիր մի տարի

ժամանակով։

§ 28. Միաբանական ներքին ժողովները գումարուում են ամիսը մի անգամ, որի զբաղման առարկաներն են՝

ա.—Վանական խորհուրդի զեկուցումներ.

բ.—Նոր պաշտօնեաների ընտրութիւն հրաժարուածների փոխարէն ցյառաջիկայ ընդհ. ժողովը.

գ.—Ընթացիկ հարցեր.

§ 29. Միաբանական ընդհ. ժողովները օրինական են, երբ ներկայ են բոլոր միաբանների $^2/_3$-ը։

§ 30. Տեղական ժողովները բացուում են և որոշումները օրինական են երբ ներկայ են վանքում գտնուող միաբանների կիսից աւելին։

§ 31. Ժողովի որոշումները վաւերական են, երբ ստանում են ձայների կիսից աւելի և հաստատուում Վեհափառ Հայրապետից։

§ 32. Միաբանական ժողովները զեկավարուում են յատուկ հրահանգով։

§ 33. Արտակարգ ժողովները գումարուում են՝

ա.—Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ

բ.—Ատենապետութեան առաջարկութեամբ և

գ.—Երբ միաբաններից եօթ հոգի գրաւոր պահանջ են դնում։

Ե.

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ընդհ. կանոններ)

§ 34. Վանական հաստատութիւններն ունեն վարիչներ, իսկ վարչական մարմինները՝ խորհուրդներ։ Ս. Հռիփսիմէի և Գայանէի վանքերը և Զուարթնոցը վանա-

հայրեր։

§ 35. Խորհուրդների անդամներին և հաստատութիւնների վարիչներին՝ ս. Հռիփսիմէի, ս. Գայանէի և Զուարթնոցի վանահայրերին ընտրում է Միաբ. ընդհ. ժողովը և առաջարկում է ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի։

§ 36. Վանական հաստատութիւնները, խորհուրդներն ու վանքերն իրենց ներքին գործառնութեանց համար ունին յատուկ հրահանգներ։

§ 37. Խորհուրդները, վարիչները և վանահայրերը պաշտօն ստանում են յատուկ յանձնողական-ստացողական արձանագրութիւն կազմելուց և ստորագրելուց յետոյ։

§ 38. Վանական վարչական մարմինները, հաստատութիւններն ու վանահայրութիւններն ունին՝ Դիւան, Կնիք, ժապաւինեալ հաշուեմատեան, գոյքի և կայքի տոմար։

§ 39. Վանական հաստատութիւնները, վարչական մարմինները, վանքերն ու Զուարթնոցը ունին իրենց նախահաշիւը և այդ սահմանում գործում են անկախ։

§ 40. Հաստատութիւններն ու վարչական մարմինները կարող են կարևոր դէպքում հրաւիրել մասնագէտ պաշտօնեաներ, խորհրդակցութեամբ վանակ. խորհրդի։

§ 41. Վանական բոլոր հաստատութիւնների և վարչական մարմինների պարտքն է անկորուստ պահպանել իրենց յանձնուած շարժական և անշարժ գոյքն ու ստացուածքը և կայից ու գոյից ամենատեսակ հաշիւներն ու մատեանները։

Զ.

ՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

§ 42. Վանական խորհուրդն է միաբանական ժողովի

գործադիր մարմինը և ընթացիկ խնդիրների կարգադրիչը։

§ 43. Վանական խորհուրդի կազմն է՝ Մայր Տաճարի Լուսարարապետ, վանական կառավ. նախագահ, Ուսումնական խորհրդի նախագահ, Մատենադարանապետ, Թանգարանապետ, Տպարանի տեսուչ և Վերստուգիչ։

§ 44. Վանական խորհուրդը ընտրում է իւր նախագահն իւր միջից և կամ միաբանական կազմից։

§ 45. Վանական խորհուրդը իւր եզրակացութեամբ ներկայացնում է Միաբանական ժողովին՝

ա.—Վարչական մարմինների և հաստատութիւնների զեկուցումները.

բ.—Տեղեկագրերը, հաշիւները, նախահաշիւները և կիսամեայ ստուգութիւնները։

§ 46. Հսկում է միաբանակ. ժողովների վաւերացրած որոշումների կատարմանը։

§ 47. Վանական Խորհուրդն է տալիս բոլոր հաստատութիւններին և վանահայրերին հաշուապահական ամենատեսակ մատեաններ։

§ 48. Վանական հաստատութիւնների, վարչական մարմինների և վանահայրերի կապած դաշնագրերը և կայացրած համաձայնութիւնները օրինական են, երբ ստացուել են վանական խորհուրդի վաւերացումը։

§ 49. Վանական խորհուրդի միջոցով է կատարւում ներքին հաստատութիւնների հետ ունեցած բոլոր գրագրութիւնները։

Ծանօթ.—Արտաքին հաստատութիւնների յարաբերութիւնները կատարւում են Հայրապետական դիւանի և ս. Էջմիածնի սինոդի միջոցով։

§ 50. Վանական խորհուրդն ունի իւր գանձարանը, դանձապահը և հաշուապահը։

§ 51. Վանական խորհուրդն ստանում է ս. Էջմիա-

ծնի Սինոդից, Նորին Սրբութեան կողմից հաստատուած նախահաշիւների համաձայն, կարևոր գումարները և մանաւանդ է վանական միւս հաստատութիւններին և վարչութիւններին, ըստ նախահաշուի։

§ 52. Վանական բոլոր հաստատութիւններն ու վարչութիւնները պարտաւոր են ամսաւերջին ներկայացնել Սինոդին իրենց մօտ եղած աւելորդ գումարները, միաժամանակ և տեղեկութիւն տալով այդ մասին և վանական խորհուրդին։

§ 53. Վանական խորհուրդի իրաքանչիւր անդամ իւր տեսչութեան վերաբերեալ խնդիրների համար անհատապէս, իսկ վանակ. խորհուրդի գործունէութեան համար հաւաքաբար, պատասխանատու է Միաբ. Ժողովի առաջ։

Ի.

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ

§ 54. Մայր Աթոռն ունի իւր Ճեմարանը Աստուածաբանական և Հայագիտական բաժիններով (ֆակուլտէտներով)։

§ 55. Ճեմարանն ըստ ուսումնականին ինքնավար է։

§ 56. Ճեմարանի տնտեսական մասի կառավարութիւնը ենթակայ է Մ. Աթոռի Միաբանական Ժողովի իրաւասութեանը։

Ը.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

§ 57. Ուսումնական խորհուրդը կազմուած է եբեք անդամից։

§ 58. Խորհուրդի գործունէութեան շրջանն է քննել՝

ա.—Այն շարադրութիւնները, որ ներկայացնում են միաբանները Մայր Աթոռի հաշուով հրատարակելու համար և

բ.—Այն կրօնական-բարոյական եկեղեցական գրուածները, որոնք յանձնարարուում են Վեհափ. Հայրապետից։

գ.—Հրատարակում է գիտական «Արարատը» և «Էջմիածին» շաբաթաթերթը։

դ.—Մրցանակներ է նշանակում կրօնական, եկեղեցական հայագիտական գրուածների համար։

Թ.

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

§ 59. Մայր Աթոռն ունի իւր յատուկ քարոզչական մարմինը։

§ 60. Քարոզչական մարմինը բաղկացած է կարող և փորձառու հինգ միաբանից։

Ծանօթ. Բոլոր թեմական առաջնորդներն ի պաշտօնէ են անդամներ։

§ 61. Քարոզչական մարմնի նախագահը ընտրուում է իւր միջից։

§ 62. Քարոզչական մարմինն ունի իւր յատուկ դրոշը՝ քարոզիչներ պատրաստելու համար։

§ 63. Քարոզչական մարմինը կազմակերպում է դասախօսութիւններ, կարճատև դասընթացքներ, հրատարակում է դրքոյկներ։

§ 64. Քարոզչական մարմինն ունի կարևոր կենտրոններում իւր ճիւղերը, թեմական առաջնորդների հովանաւորութեան տակ։

§ 65. Քարոզչական մարմինն ունի իւր յատուկ թերթը

§ 66. Քարոզչական մարմինն ունի իւր նպատակներ-ի համար յատուկ միջոցներ։

Ժ.

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ.

§ 67. Մայր տաճարի ներքին բարեկարգութեան անմիջական հսկողն է Լուսարարապետը, որն ունի իւր առաջ օգնական վարդապետ և կրտսեր օգնական երկու սարկաւագ։

§ 68. Լուսարարապետի պարտականութիւններն են՝

ա.— Հսկել եկեղեցում Աստուածային պաշտաման և եկեղեցական կարգերի անթերի կատարման։

§ 69. Լուսարարապետի կարգադրութիւնները Տաճարում պարտադիր են՝

ա.—Աստուածապաշտութեան և հանդէսների ժամանակ միաբանների համար։

բ.—Տաճարի պաշտօնեանների համար։

§ 70. Մայր Տաճարն ունի իւր ժամօրհնողը։

§ 71. Մայր Տաճարն ունի միայուն երգեցիկ խումբ և խմբապետ։

ԺԱ.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ.

§ 72. Մատենադարանի նպատակն է նպաստել լայն հասկացողութեամբ հայագիտութեան ուսումնասիրու-

թեան, որի համար պէտք է աշխատել ի մի հաւաքել Հայ Ձեռագիրները և Հայագիտութեան վերաբերեալ տպագիր հայ և օտարազգի լեզուներով բոլոր հրատարակութիւններն ու հայ մամուլը։

§ 73. Մատենադարանը կառավարում է մատենադարանապետը իւր օգնականներով։

§ 74. Մայր Աթոռն ունի իւր ընթերցարանը։

ԺԲ.

ԹԱՆԳԱՐԱՆ

§ 75. Թանգարանի նպատակն է նպաստել Հայ անցեալ և ներկայ կեանքի ուսումնասիրութեան, որի համար պէտք է ի մի ժողովել ազգային և եկեղեցական մշակոյթի ամենատեսակ Հայ և օտարազգի արտադրութիւններն ու յուշարձանները։

§ 76. Թանգարանն ունի հետևեալ բաժանմունքները՝

ա.—Եկեղեցական Թանգարան

բ.—Ազգային հնութիւնների Թանգարան՝ ազգագրական բաժնով.

գ.—Պատկերասրահ.

դ.—Զուարթնոցի Թանգարան.

§ 77. Թանգարանը կառավարում է Թանգարանապետը իւր օգնականներով։

§ 78. Մայր աթոռն ունի Վանակ. Հնագիտական Ընկերութիւն Հայրենի հնութիւնները կործանումից պահպանելու։

§ 79. Վանական Հնագիտական Ընկերութիւնն ունի իւր կանոնադրութիւնը

ԺԳ.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԴԻՒԱՆ (Արխիվ)։

§ 80. Մայր աթոռն ունի իւր կենդրոնական դիւանը։

§ 81. Դիւանի նպատակն է ի մի հաւաքել կաթողիկոսարանի, Էջմիածնի Սինոդի, բոլոր թեմերի կոնսիստորեանների և առաջնորդների, Ճեմարանի, Թեմական և ծխ. դպրոցների և այլ պատմական արժէք ունեցող վաւերագրերը։

§ 82. Դիւանն ունի իւր յատուկ շէնքը։

§ 83. Դիւանն ունի վարիչ իւր օգնականով.

§ Դիւանն ունի իւր մասնագիտական գրադարանը։

ԺԴ.

ՏՊԱՐԱՆ

§ 85. Տպարանի նպատակն է ծառայել ազգային լուսաւորութեան գործին, հրատարակելով կրօնա-բարոյական, գիտական, գրական-գեղարուեստական աշխատանքներ։

Սոյն նպատակին ծառայելու համար տպարանը պէտք է արդիւնաբերական հիմունքներով կառավարուի։

§ 86. Տպարանն ունի իւր վարիչ-տեսուչը և օգնականը։

§ 87. Գրատունը տպարանից անջատէ, ունի իւր առանձին հաշուապահութիւնն և գտնւում է տպարանի վարիչի օգնականի անմիջական հսկողութեան և պատասխանատուութեան տակ։

ԺԵ.

ՀԻՒՐԱՏՈՒՆ

§ 88. Մայր աթոռն ունի իւր վանական հիւրատուն։

§ 89. Հիւրատունն ունի իւր հիւրընկալը։

ԺԶ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ.

§ 90. Մայր աթոռն ունի իւր հիւանդանոցը.

§ 91. Հիւանդանոցն ունի իւր բժիշկը, դեղատունը, դեղագործ և հիւանդապահները։

§ 92. Հիւանդանոցն ունի իւր վարիչը։

ԺԷ.

ՍԵՂԱՆԱՏՈՒՆ.

§ 93. Միաբանութիւնն ունի իւր եղբայրական սեղանատունը։

§ 94. Սեղանատունն ունի իւր վարիչը, որի հսկողութեան տակ են գտնւում խոհանոցն ու մառանը։

ԺԸ.

ՀԱՆԴԵՐՁԱՏՈՒՆ

§ 95. Մայր աթոռն ունի իւր հանդերձատունը. հանդերձապետը մատակարարում է հիւրատանն ու միաբաններին անհրաժեշտ իրեր և կահաւորութիւն։

ԺԹ.

ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

§ 96. Վանական կառավարութիւնը՝

ա.—Կառավարում է վանքի բոլոր կալուածները.

բ.—Զբաղւում է երկրագործութեամբ, այգեգործութեամբ, գինեգործութեամբ, կաթնատնտեսութեամբ, անասնապահութեամբ, թռչնաբուծութեամբ և

գ.—Գանձում է նոցա եկամուտները.

դ.—Հսկում է վանքի անտեսական հիմնարկութիւնների (եպէքարական կայարան, փուռ, ագարակ. շտեմարան,

գինետուն, մթերանոց, մառան և այլն) վրայ։

Ե.—Հոգում է միաբանական բնակարանների, գերեզմանատան բարեզարդության և վերանորոգությունների վրայ։

§ 97. Վանական կառավարությունը կազմում է հինգ անդամից, որոնց իւրաքանչիւր մէկի հսկողությանն է յանձնւում որև է մաս։

Ի.

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ.

§ 98. Վանական բոլոր հաստատությունների և մարմինների դրամական և նիւթի հաշիւները քննում է վերստուգիչը։

§ 99. Վերստուգիչը ստուգության է ենթարկում վանական բոլոր հաստատությունների և վանքերի դրամական հաշիւը և նիւթերը Վանական Խորհուրդից ստացած հրահանգի համաձայն։

§ 100. Վերստուգիչը իւր դիտողությունները, նկատողությունները յանձնում է Վանակ. Խորհուրդին։

§ 101. Վերստուգիչը բացի կանոնադրությամբ նախատեսնուած ստուգություններից, կարող է կատարել և արտակարգ վերստուգություններ։

§ 102. Արտակարգ վերստուգություններ կատարում են՝ երբ կարգադրում է Վեհափառ Հայրապետը, երբ որոշում է միաբանակ. ժողովը, վանական խորհուրդը և կամ երբ խնդիր է յարուցանում վանական որև է վարչական մարմին։

ԻԱ.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲՆՈՒԹԻՒՆ

§ 103. Սոյն կանոնադրության մէջ կարող է փոփոխություն լինել միաբ. ընդհ. ժողովի $^2/_3$-ի ցանկությամբ։

§ 104. Մինչև նոր կանոնադրության հաստատուելը գործադրում է հինը։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011975